



Հոդվածի հղումը. Բաբայան Վ. (2024), ՀՀ առևտրային բանկերի կապիտալի համարժեքության և իրացվելիության ռիսկերի գնահատում, *Տնտեսություն և հասարակություն*, ՀՊՏՀ, *Տնտեսագետ*, 1(4), 32-49, DOI: 10.52174/29538114_2024.1-32

Ներկայացվել է խմբագրություն՝ 14.03.2024 թ.

Ուղարկվել է գրախոսության՝ 15.03.2024 թ.

Երաշխավորվել է հրատարակման՝ 02.07.2024 թ.

ՎԱՀԱՆ ԲԱԲԱՅԱՆ

ՀՊՏՀ կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի դոցենտ, Կոնստանտինոպոլիսի թեկնածու

 <https://orcid.org/0009-0003-2096-2274>

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Սույն հոդվածը նվիրված է ՀՀ առևտրային բանկերի հուսալիության և կայունության առկա վիճակի գնահատմանը:

Առաջադրվել են համաշխարհային արդի մարտահրավերներից բխող իրավիճակային խնդիրներ, մասնավորապես՝ երկրի տնտեսական ակտիվության անկման պարագայում ՀՀ առևտրային բանկերի վարկային պորտֆելի 5%, 10%, 20% և 30% անհուսալի դասակարգման դեպքում 2023 թվականի չորրորդ եռամսյակի միջանկյալ հաշվետվությունների ֆինանսական ցուցանիշների հիման վրա բանկերի կապիտալի համարժեքության և իրացվելիության գնահատումը, ինչպես նաև նորմատիվ կապիտալի ռիսկերը բնութագրող հիմնական ցուցանիշների վարքագիծը:

ՀՀ բանկային օրենսդրությամբ սահմանված անվճարունակության հիմքերը տեսականորեն թույլ չեն տալիս բանկերում բացասական կապիտալի ձևավորում, սակայն գործնականում դա հնարավոր է վերջիններիս կողմից ֆինանսական հաշվետվություններում ակտիվների իրական որակը թաքցնելու դեպքում:

Հիմնաբառեր. բանկ, ռիսկ, շահութաբերություն, ընդհանուր ակտիվ, կապիտալի համարժեքություն, նորմատիվային կապիտալ, իրացվելիություն, սթրես թեստավորում

JEL: G21, G32

DOI: 10.52174/29538114_2024.1-32

Ներածություն: ՀՀ տնտեսության և/կամ հասարակության իրացվելի ռեսուրսների, ինչպես նաև կապիտալ ներդրումների նկատմամբ պահանջները հիմնականում բավարարվում են բանկային համակարգի կողմից:

ՀՀ ֆինանսական համակարգի ակտիվների գերակշիռ մասը¹ բաժին է ընկնում ՀՀ բանկային համակարգին, իսկ 31.12.2023 թ. դրությամբ վերջինիս ընդհանուր ակտիվները (9,2 տրիլիոն դրամ) կազմել են Հայաստանի Հանրապետության 2023 թվականի ՀՆԱ 96,8%-ը², իսկ պարտավորությունները (7,8 տրիլիոն դրամ)³ ՀՆԱ 82%-ը³:

ՀՀ արժեթղթերի շուկայի «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ հարթակներում 31.12.2023 թ. դրությամբ գրանցված՝

- Կորպորատիվ պարտատոմսերի 90,2%-ը բաժին է ընկնում ՀՀ առևտրային բանկերին, 3,9%-ը՝ երկու վարկային կազմակերպություններին, իսկ 5,9%-ը՝ երկու ոչ ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսերին⁴:
- Բաժնային արժեթղթերի 83%-ը բաժին է ընկնում ՀՀ 4 առևտրային բանկերին⁵:

Սույն հետազոտության նպատակն է առաջադրված իրավիճակային խնդրի՝ երկրում տնտեսական ակտիվության անկման պարագայում սթրես թեստավորման մեթոդաբանության և ՀՀ առևտրային բանկերի կողմից հրապարակված՝ 2023 թվականի չորրորդ եռամսյակի միջանկյալ հաշվետվության տվյալների հիման վրա գնահատել ՀՀ առևտրային բանկերի կապիտալի համարժեքության և իրացվելիության ռիսկերը բնութագրող ցուցանիշների՝ տնտեսական նորմատիվների, ինչպես նաև նորմատիվային կապիտալի վարքագիծը:

Գրականության ակնարկ: Հեղազոտության շրջանակներում առաջադրված խնդրների լուծման նպատակով առաջնահերթ ուսումնասիրվել են ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի՝

- 09.02.2007 թ. թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» Կանոնակարգ 2-ով կապիտալի համարժեքության և իրացվելիության ռիսկերի կառավարման նպատակով սահմանված տնտեսական նորմատիվները⁶, մասնավորապես.

¹ Տե՛ս ՀՀ ԿԲ կայքէջ, Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2022 թ., Եր., 2023, էջ 43, https://www.cba.am/AM/pperiodicals/Stability_Report_2022.pdf

² Տե՛ս ՀՀ ԿԲ կայքէջ, Ֆինանսական կազմակերպությունների վիճակագրություն, «ՀՀ բանկային համակարգի ակտիվներ /ՀՆԱ/ և վարկեր /ՀՆԱ/», <https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx>

³ Տե՛ս ՀՀ ԿԲ կայքէջ, Ֆինանսական կազմակերպությունների վիճակագրություն, «ՀՀ բանկային համակարգի հիմնական հաշվեկշռային ցուցանիշներ», <https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx>

⁴ Տե՛ս «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ, «Թողարկողներ և գործիքներ». «Արժեթղթեր», «Պարտատոմսեր» ենթաբաժիններ, <https://amx.am/am/instruments/bond>

⁵ Տե՛ս «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ, «Թողարկողներ և գործիքներ». «Արժեթղթեր», «Բաժնետոմսերի ցուցակ» ենթաբաժիններ, <https://amx.am/am/instruments/shares>

⁶ Տե՛ս ՀՀ ԿԲ խորհրդի 09.02.2007 թ. թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» Կանոնակարգ 2-ի հիմնադրույթները, <https://www.cba.am/am/SitePages/regbanks.aspx>

1. Կապիտալի համարժեքության ռիսկը կառավարվում է Ն1/1 և Ն1/2 տնտեսական նորմատիվներով, որոնց նվազագույն հարաբերակցությունները սահմանված են համապատասխանաբար՝ 6,2 տոկոս և 8,3 տոկոս:
2. Բանկերի իրացվելիության ռիսկը կառավարվում է Ն2/1 և Ն2/2 տնտեսական նորմատիվներով, որոնց նվազագույն հարաբերակցությունները սահմանված են համապատասխանաբար՝ 15 տոկոս և 60 տոկոս:

- 10.07.2007 թ. «Բանկերի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը» և «Բանկերի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերի լրացման ցուցումները» 205-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքում գործող բանկերի, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի կողմից հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների կազմն ու կառուցվածքը, ինչպես նաև հրապարակման գործընթացը⁷:

- 16.04.2013 թ. թիվ 102-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ը, որում սահմանվում են ՀՀ առևտրային բանկերում ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները: Կանոնակարգում առանձնահատուկ տեղ է հատկացվում բանկերի ռիսկերի կառավարման նկատմամբ պետության (ի դեմս ՀՀ կենտրոնական բանկի) տեսլականին, որը ՀՀ առևտրային բանկերի համար կրում է պարտադիր բնույթ, և վերջիններս իրենց ներքին իրավական ակտերը կառուցում են կանոնակարգով սահմանված պահանջների հիման վրա:

Սույն հոդվածի շրջանակներում առաջադրված խնդիրներին մասամբ անդրադարձ է կատարվել «ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշների համեմատական վերլուծություն» գիտական հոդվածում⁸, որտեղ հեղինակը, ՀՀ առևտրային բանկերի 2023 թվականի առաջին կիսամյակի ֆինանսական հիմնական ցուցանիշները համեմատելով 2022 թվականի առաջին կիսամյակի համապատասխան ցուցանիշների հետ, բացահայտել է բանկային համակարգի հիմնական միտումներն ու օրինաչափությունները:

Հետազոտական աշխատանքների գործընթացում կարևորվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից ֆինանսական կայունության ապահովման գործառույթի շրջանակներում հրապարակված Ֆինանսական կայունության հաշվետվության⁹ ուսումնասիրությունը:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից Ֆինանսական կայունության հաշվետվությամբ, ֆինանսական ոլորտների մակրոցուցանիշների հիման վրա ներկայացվում են ֆինանսական համակարգի կայունությունը վտանգող հնարավոր ռիսկերը և այդ ռիսկերին դիմակայելու ունակության ընդհանուր գնահատականը:

Թամարա Հովակիմյանի «Ֆինանսական մաթեմատիկա» ուսումնական ձեռնարկում մաթեմատիկական գնահատման և վերլուծության մեթոդները

⁷ Տե՛ս ՀՀ ԿԲ խորհրդի 10.07.2007 թ. 205-Ն «Բանկերի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը» և «Բանկերի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերի լրացման ցուցումները» որոշումը, <https://www.cba.am/am/SitePages/regbanks.aspx>

⁸ Տե՛ս **Բաբայան Վ.**, ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշների համեմատական վերլուծություն, Եր., «Տնտեսություն և հասարակություն», թիվ 3, 2023 թ., էջ 31:

⁹ Տե՛ս ՀՀ ԿԲ Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2022, https://www.cba.am/AM/ppublications/Stability_Report_2022.pdf

ներկայացվում են ֆինանսական շուկայի գրեթե բոլոր գործառնությունների դիտակետից, հատկապես առավել հաճախ հանդիպող անդրադարձ (ռեկորենտային) բանաձևերի օգնությամբ: Մասնավոր դեպքերում և իրավիճակներում տրվում են նաև ռետրոսպեկտիվ և պերսպեկտիվ մեթոդների կիրառություններ: Աշխատանքում ընդգրկվել են նաև այնպիսի գործառնությունների գնահատման մեթոդներ, ինչպիսիք են կոնտոկորենտային, մուրհակային վարկերի, ֆակտորինգային և լիզինգային գործառնությունները¹⁰:

Էդգար Ադաբեկյանն իր «Կենտրոնացումները՝ որպես կապիտալի շուկայի զարգացման խոչընդոտ» գիտական հոդվածում հանգամանալից անդրադարձել է ՀՀ կապիտալի շուկայում առկա կենտրոնացումների ձևավորման պատճառներին և շուկայի զարգացման խոչընդոտներին: Հոդվածագիրը բացահայտել է կապիտալի շուկայում բանկերի մասնակցության գերակայության պատճառները¹¹:

Ա. Սարգսյանի և Կ. Առաքելյանի «Տնտեսագիտության վերլուծության տեսություն» ուսումնական ձեռնարկում¹² ներկայացված համեմատությունների, խմբավորումների և հաշվեկշռային ավանդական եղանակները որպես հիմք են ընդունվել սույն հետազոտական աշխատանքների կատարման ընթացքում:

Միջազգային իրավական նորմերի շրջանակներում ուսումնասիրվել են.

1. Բազելի կոմիտեի¹³ կողմից անդամ երկրներին ներկայացված մեթոդական ցուցումները, որոնք անդամ երկրների համար խորհրդատվական նշանակություն ունեն: Բազելյան կոմիտեն ստեղծման օրվանից մինչ օրս սահմանել և կիրառման նպատակով իրեն անդամակցող երկրներին է առաջարկել բանկերի կարգավորման մի շարք միջազգային չափորոշիչներ և կարգավորող նորմեր, մասնավորապես՝ կապիտալի համարժեքության վերաբերյալ, որոնք հայտնի են որպես՝ Բազել I, Բազել II, Բազել III և Բազել IV:

2. ՀՀ առևտրային բանկերի ռիսկերի կառավարման գործընթացում կարևորվում է ISO 31000 «Ռիսկերի կառավարում» ստանդարտի¹⁴ հիմնարկությունների կիրառումը: Ստանդարտում ներկայացվում են ռիսկերի կառավարման սկզբունքները, գործընթացները և մոտեցումները:

¹⁰ Տե՛ս **Հովակիմյան Թ.**, «Ֆինանսական մաթեմատիկա», ուսումնական ձեռնարկ, Եր., «Տիգրան Մեծ», 2003, 216 էջ,

https://books.google.am/books/about/%D5%96%D5%AB%D5%B6%D5%A1%D5%B6%D5%BD%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%B4%D5%A1%D5%A9%D5%A5%D5%B4%D5%A1%D5%BF%D5%AB%D5%AF.html?id=-8geAAAACA&redir_esc=y

¹¹ Տե՛ս **Ադաբեկյան Է.**, Կենտրոնացումները՝ որպես կապիտալի շուկայի զարգացման խոչընդոտ, Եր., «Բանբեր ՀՊՏՀ», թիվ 4, 2020, էջ 62-83,

<https://asue.am/upload/files/science/banber/2020-year-4/4.pdf>

¹² Տե՛ս **Սարգսյան Ա., Առաքելյան Կ.**, Տնտեսագիտության վերլուծության տեսություն, ուսումն. ձեռնարկ, Եր., «Տնտեսագետ», 2010, 240 էջ:

¹³ Տե՛ս **Բաբայան Վ.**, ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշների համեմատական վերլուծություն», Եր., «Տնտեսություն և հասարակություն», թիվ 3, 2023 թ., էջ 31, <chrome-extension://efaidnbmnnnibpccjpcglclefindmkaj/https://asue.am/upload/files/science/economy/2023-year-3/2.pdf>

¹⁴ Տե՛ս ISO 31000. Ռիսկերի կառավարման ստանդարտ,

https://www.google.am/search?q=iso+31000&sca_esv=a591636a69e92710&sxsrf=ACQVn09ahr3tF UgHulyxjirQ_kfheuEnw:1708570286559&tbm=isch&source=iu&ictx=1&vet=1&fir=1WEoc5xYcQcRTM%252CndLNp4vZ3f3uUM%252C_%253B7LzpiZPzoSw26M%252CtnvKluLhIAO_DM%252C_%253ByKhrrnDsB2RpALM%252Cz5JoTqi9Ss5ErM%252C_%253BSOV8rNORoA5IVM%252C3TEICqKcExwo

3. «Կազմակերպությունների ռիսկերի կառավարում: Ինտեգրված մոդել: COSO ERM»¹⁵ հայեցակարգում ներկայացվում են ռիսկերի կառավարման համակարգը, նպատակները, գործընթացները: Սույն հայեցակարգը լայնորեն կիրառվում է ամբողջ աշխարհում կապիտալի և փողի շուկայի մասնակիցների կողմից:

Հետազոտության մեթոդաբանություն: ՀՀ բանկային համակարգի կայունության գնահատման դիտակետից ուսումնասիրվել է ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական կայունությունը բնութագրող հիմնական ցուցանիշների, մասնավորապես՝ կապիտալի համարժեքության և իրացվելիության ռիսկերը բնութագրող տնտեսական նորմատիվների, ինչպես նաև նորմատիվային կապիտալի վարքագիծը:

Հետազոտությունը հիմնականում իրականացվել է Սթրեն թեստերի մեթոդաբանության հիման վրա, սակայն, դրա հետ մեկտեղ, ՀՀ առևտրային բանկերի կապիտալի համարժեքության և իրացվելիության գնահատման նպատակով կիրառվել են վերլուծության ավանդական եղանակները, մասնավորապես՝ համեմատությունների, խմբավորումների և հաշվեկշռային, ինչպես նաև վիճակագրական մեթոդները:

Սթրեն թեստերի մեթոդաբանությունը թույլ է տալիս հնարավոր՝ ենթադրվող, իրադարձության(ների) ի հայտ գալու պարագայում գնահատել դիտարկվող բանկի գործունեությունը և բացահայտել հնարավոր ռիսկերը, որոնք կարող են խաթարել կառույցի հուսալիությունը և կայունությունը: Սույն մեթոդաբանությունը մեր կողմից կիրառվել է ՀՀ առևտրային բանկերի նորմատիվային կապիտալի, կապիտալի համարժեքության և իրացվելիության ցուցանիշների վրա ազդող հնարավոր ռիսկերի բացահայտման դիտակետից:

Սթրեն թեստերը կիրառվում են ռիսկերի կառավարման գործընթացում՝ ռիսկերի բացահայտման և գնահատման նպատակով:

Հիմք ընդունելով աշխարհաքաղաքական իրադարձությունները և միտումները՝ առաջադրվել է հետևյալ իրավիճակային խնդիրը. միջազգային հանրության կամ առանձին պետությունների կողմից Հայաստանի նկատմամբ տնտեսական պատժամիջոցների կիրառման պարագայում գնահատել ՀՀ առևտրային բանկերի հուսալիության և կայունության հիմնական ցուցիչները՝ կապիտալի համարժեքության և իրացվելիության տնտեսական նորմատիվների, ինչպես նաև նորմատիվային կապիտալի վարքագիծը:

Վերը ներկայացված իրավիճակային խնդրի դիտակետից ՀՀ բանկային համակարգում կձևավորվեն տարաբնույթ ռիսկեր, հատկանշական է տնտեսական ակտիվության անկման պարագայում վճարունակության ռիսկի ի հայտ գալու հավանականությունը, որը կհանգեցնի բանկերի անվճարունակության խնդրին: Այդ իսկ պատճառով հետազոտության տիրույթում ընդգրկվել են

[om%252C_%253BIF6ibvAgOBr_CM%252CFP4IQrNjYpf4SM%252C_%253B9wsheCHs9YcDGM%252CLVMPtVkXaZETYM%252C_%253BqrgsvU5AbgGnRM%252C1ebDsolyZb37mM%252C_&usg=AI4_kQ80a6w9Xcd3ydsNOlywXjbVMH-zA&sa=X&ved=2ahUKewjc710o-L2EAxX-QvEDHTMXBkMQ_h16BAhUEAE#imgrc=7LzpiZPzoSw26M](https://www.cso.org/~/media/Files/2019/11/COSO-ERM-Presentation_2019.pdf)

¹⁵ St' u The Committee of Sponsoring Organizations of the Treadway Commission «Управление рисками организаций», Интегрированная модель, Краткое изложение, Концептуальные основы, Сентябрь, 2019, [chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/http://ilinsk.com/wp-content/uploads/2019/11/COSO-ERM-Presentation_2019.pdf](http://ilinsk.com/wp-content/uploads/2019/11/COSO-ERM-Presentation_2019.pdf)

վերոբերյալ տնտեսական նորմատիվները:

Համեմատությունների մեթոդի միջոցով բացահայտվել են ՀՀ առևտրային բանկերի հրապարակած՝ միջանկյալ հաշվետվություններում ընդգրկված հիմնական ֆինանսական ցուցանիշների փոփոխությունները, զարգացման միտումները և օրինաչափությունները:

Համեմատությունները կատարվել են երկու մակարդակով.

1. ուսումնասիրվող տնտեսական նորմատիվների,
2. հիմնական ֆինանսական ցուցանիշների՝ ակտիվների, վարկային ներդրումների և նորմատիվային կապիտալի, ինչպես նաև շահութաբերության բնութագրիչների:

Համեմատական վերլուծության ընթացքում կիրառվել են հետևյալ տեսակները.

- հորիզոնական վերլուծություն,
- ուղղահայաց վերլուծություն, որի միջոցով բացահայտվել են ցուցանիշների կառուցվածքը, ինչպես նաև յուրաքանչյուր բանկի համապատասխան ցուցանիշի ձևավորման գործընթացում մասնակցության աստիճանը:

Խմբավորումների մեթոդ. ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված տնտեսական նորմատիվները ներկայացվել են հետևյալ խմբերի տեսքով.

- **Համարժեքության ռիսկի կառավարման նորմատիվներ**

Սույն նորմատիվները բնութագրում են, թե նորմատիվային սեփական՝ ընդհանուր և հիմնական կապիտալները որքանով են ունակ ծածկելու բանկի կողմից ակտիվային գործառնությունների արդյունքում ստանձնած գործառնական, վարկային և շուկայական ռիսկերը:

- **Իրացվելիության ռիսկի կառավարման նորմատիվներ**

Իրացվելիության նորմատիվների միջոցով ՀՀ կենտրոնական բանկը կառավարում է ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր և ընթացիկ իրացվելիության ռիսկերը՝ այդպես կանխարգելելով անվճարունակության ռիսկի ի հայտ գալու հավանականությունը:

Խմբավորումներն իրականացվել են պարզ՝ մեկ հատկանիշով, վերլուծության գործընթացում խմբավորումները կատարվել են ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական մեծություններով:

Փորձագիտական գնահատման մեթոդի հիման վրա մեկնաբանվել են վերլուծության արդյունքները և կատարվել են համապատասխան եզրահանգումներ, ինչպես նաև վերլուծվել և ներկայացվել են ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկերի ռիսկերի կառավարման նպատակով սահմանված տնտեսական նորմատիվների էությունը և առանձնահատկությունները:

Հետազոտության տիրույթում ընդգրկվել է նաև ՀՀ առևտրային բանկերի շահութաբերության, մասնավորապես՝ «Շահույթ», «ROE» և «ROA» ցուցանիշների վերլուծությունը:

«ROE» և «ROA» ցուցանիշների հաշվարկում հիմք են ընդունվել ՀՀ առևտրային բանկերի 2023 թվականի չորրորդ եռամսյակի արդյունքներով հրապարակված միջանկյալ հաշվետվությունում ներառված ֆինանսական ցուցանիշները:

Վերոբերյալ ցուցանիշները դիտվում են որպես ընկերության՝ մեր դեպքում ՀՀ առևտրային բանկերի ռեսուրսների կառավարման որակը բնութագրող լավագույն գործակիցներ:

Վերլուծություն: ՀՀ բանկային համակարգի կայունության և հուսալիության գնահատման տեսանկյունից ուսումնասիրենք երկրում տնտեսական ակտիվության անկման պարագայում ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական կայունությունը բնութագրող հիմնական ցուցանիշների, մասնավորապես՝ կապիտալի համարժեքության և իրացվելիության ռիսկերը բնութագրող ցուցանիշների՝ տնտեսական նորմատիվների, ինչպես նաև նորմատիվային կապիտալի վարքագիծը:

Վերը ներկայացված խնդրի առաջադրման հիմնապատճառ է հանդիսացել.

- ՀՀ պետական քաղաքականության ոչ ցանկալի փոփոխությունն արևմտյան գերտերությունների համար կարող է պատժամիջոցների կիրառման պատճառ հանդիսանալ:
- Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ պարբերաբար իրականացվելիք տնտեսական քաղաքականությունը, մասնավորապես՝ Լարսի անցակետում հայկական բեռների մուտքի արգելափակումը ՌԴ տարածք, այն դեպքում, երբ ՀՀ արտահանման ծավալի 40.6%-ը¹⁶ բաժին է ընկնում ՌԴ շուկային, իսկ ՀՀ ընդհանուր առևտրաշրջանառության կախվածությունը ՌԴ շուկայից, միջին գնահատականով, կազմում է մոտ 35.3%¹⁷:

Ներկայացված դեպքերի տեղի ունենալու պարագայում ՀՀ առևտրային բանկերը կունենան հետևյալ խնդիրները.

1. Վճարահաշվարկային համակարգի խաթարում, որը կդրսևորվի տնտեսության ֆինանսավորման և դրամային հոսքերի կտրուկ նվազմամբ:
2. Տնտեսության արտարժույթային հոսքերի նվազման հետևանքով արժույթային շուկայի «կոլապսային» իրավիճակի ձևավորում:
3. Իրացման շուկաների կորուստ, որը կհանգեցնի տնտեսավարողների շրջանում վճարունակության խնդրի ձևավորմանը:

Այժմ վերոնշյալ հնարավոր իրադարձությունների հիման վրա շարադրենք հետևյալ իրավիճակային խնդիրը. **Հայաստանի Հանրապետության նկատմամբ միջազգային հանրության կամ առանձին պետությունների կողմից պատժամիջոցների կամ տնտեսական ոչ բարենպաստ քաղաքականության կիրառման դեպքում ՀՀ առևտրային բանկերի վարկային պորտֆելի 5%, 10%, 20% և 30% անհուսալի դասակարգման դեպքում գնահատել ՀՀ առևտրային բանկերի կապիտալի համարժեքության և իրացվելիության ռիսկերը բնութագրող ցուցանիշների՝ տնտեսական նորմատիվների, ինչպես նաև նորմատիվային կապիտալի վարքագիծը:**

Վերոբերյալ իրավիճակային խնդրից բխող վերլուծության արդյունքները ներկայացնելուց առաջ բացահայտենք ՀՀ առևտրային բանկերի 2023 թվականի չորրորդ եռամսյակի գործունեության արդյունքում ձևավորված հիմնական ցուցանիշները:

¹⁶ Տե՛ս ՀՀ ՎԿ կայքէջ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., 2024, էջ 157, https://armstat.am/file/article/sv_12_23a_411.pdf

¹⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 154:

«Հ բանկային համակարգի հիմնական ցուցանիշները (31.12.2023 թ. դրությամբ, հազ. դրամ)»²¹

h/h	Բանկի անվանումը	Ակտիվներ		Ընդհանուր կապիտալ			Վարկային ներդրումներ և այլ փոխադրվածություններ	
		Գումար	Տ/Կ	Նորմարիվային	Հաշվեկշռային	Շեղում	Գումար	Տ/Կ
1	«Ինտերբանկ» ՓԲԸ	591,448,565	6.4%	91,575,649	92,690,606	-1,114,957	336,897,915	6.7%
2	«ԲԻԲԸՆՍ Բանկ» ՓԲԸ	114,325,189	1.2%	35,725,130	32,268,944	3,456,186	50,572,585	1.0%
3	«ԱյդիԲանկ» ՓԲԸ	369,310,152	4.0%	49,695,721	66,862,464	-17,166,743	164,251,371	3.3%
4	«Ամերիաբանկ» ՓԲԸ	1,409,581,217	15.3%	224,093,877	195,787,335	28,306,542	984,746,562	19.6%
5	«Ակրա-Բանկ» ԲԲԸ	783,504,252	8.5%	123,625,300	133,295,854	-9,670,554	542,329,670	10.8%
6	«Արցախբանկ» ՓԲԸ	156,130,332	1.7%	62,364,528	31,982,478	30,382,050	27,495,593	0.5%
7	«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ	241,267,985	2.6%	49,973,003	52,832,780	-2,859,777	156,332,911	3.1%
8	«Յունիբանկ» ԲԲԸ	291,142,621	3.2%	38,075,417	42,464,554	-4,389,137	149,528,593	3.0%
9	«Էվոկաբանկ» ՓԲԸ	445,643,364	4.8%	70,878,103	69,460,108	1,417,995	211,751,365	4.2%
10	«ԱՄԻՕ Բանկ » ՓԲԸ	830,458,899	9.0%	103,095,348	156,499,085	-53,403,737	497,825,975	9.9%
11	«Մելլաթբանկ» ՓԲԸ	111,916,482	1.2%	51,852,212	52,255,124	-402,912	37,662,456	0.7%
12	«Կոնվերսբանկ» ՓԲԸ	506,756,242	5.5%	73,312,602	75,697,732	-2,385,130	271,831,024	5.4%
13	«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ	291,310,900	3.2%	60,426,971	60,639,512	-212,541	184,714,579	3.7%
14	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ	464,882,112	5.1%	63,639,930	60,446,005	3,193,925	291,399,068	5.8%
15	«Արոշինբանկ» ՓԲԸ	1,634,175,896	17.8%	174,028,159	191,352,570	-17,324,411	671,580,291	13.3%
16	«Արմսվիսբանկ» ՓԲԸ	427,379,447	4.6%	91,361,993	56,009,286	35,352,707	166,583,436	3.3%
17	«Արարատբանկ» ԲԲԸ	407,516,313	4.4%	58,604,475	59,926,930	-1,322,455	200,903,004	4.0%
18	«Ֆասթ բանկ» ՓԲԸ	116,992,381	1.3%	44,731,931	53,475,839	-8,743,908	89,181,788	1.8%
	Ընդամենը	9,193,742,349	100%	1,467,060,349	1,483,947,206	-16,886,857	5,035,588,186.0	100%

²¹ Կազմել է հեղինակը՝ հիմք ընդունելով ՀՀ առևտրային բանկերի կողմից սահմանված կարգով հրապարակված ֆինանսական ցուցանիշները, ՀՀ առևտրային բանկերի կայքէջեր, <https://www.cba.am/am/SitePages/fscfobanks.aspx>

ՀՀ առևտրային բանկերի՝

- ընդհանուր ակտիվները՝ 9,2 տրիլիոն դրամ, կազմել են ՀՆԱ 96,8%-ը, որի 17,8%-ը բաժին է ընկնում «Արդշինբանկ» ՓԲԸ-ին՝ 1,6 տրիլիոն դրամ,
- նորմատիվային կապիտալը՝ 1,5 տրիլիոն դրամ, կազմել է ՀՆԱ 15,8%-ը, որի 15,3%-ը բաժին է ընկնում «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին՝ 224 մլրդ դրամ,
- վարկային ներդրումները և այլ փոխատվությունները 5,01 տրիլիոն դրամով կազմել են ՀՆԱ 52,7%-ը, որի 19,6%-ը բաժին է ընկնում «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին՝ 985 մլրդ դրամ:

Աղյուսակ 2

ՀՀ առևտրային բանկերի շահութաբերության հիմնական ցուցանիշները²²

№	Բանկերի անվանումը	Շահույթ (գումար՝ հազ. դրամ)				ROE	ROA
		31.12.23 թ.	31.12.22 թ.	Շեղում /2-3/		31.12.23 թ.	
		1	2	3	4	5 ²³	6
1	«Ինտերբանկ» ՓԲԸ	26,454,233	23,645,642	2,808,591	12%	28.5%	4.5%
2	«ԲԻԲԼՈՍ Բանկ» ՓԲԸ	1,499,356	921,107	578,249	63%	4.6%	1.3%
3	«ԱյԴիԲանկ» ՓԲԸ	15,637,880	14,992,453	645,427	4%	23.4%	4.2%
4	«Ամերիաբանկ» ՓԲԸ	46,051,833	44,269,287	1,782,546	4%	23.5%	3.3%
5	«Ակբա-Բանկ» ԲԲԸ	28,578,576	22,736,640	5,841,936	26%	21.4%	3.6%
6	«Արցախբանկ» ՓԲԸ	(24,080,39)	7,393,364	(31,473,763)	-426%	-75.3%	-15.4%
7	«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ	4,033,404	(1,859,292)	5,892,696	-317%	7.6%	1.7%
8	«Յոնիբանկ» ԲԲԸ	6,414,892	4,582,739	1,832,153	40%	15.1%	2.2%
9	«Էվոկաբանկ» ՓԲԸ	11,035,980	25,724,399	(14,688,419)	-57%	15.9%	2.5%
10	«ԱՄԻՕ Բանկ» ՓԲԸ	2,141,567	738,294	1,403,273	190%	1.4%	0.3%
11	«Մելլաթբանկ» ՓԲԸ	5,388,483	3,478,828	1,909,655	55%	10.3%	4.8%
12	«Կոնվերսբանկ» ՓԲԸ	14,623,669	14,031,349	592,320	4%	19.3%	2.9%
13	«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ	11,053,887	8,017,916	3,035,971	38%	18.2%	3.8%
14	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ	4,719,986	6,854,674	(2,134,688)	-31%	7.8%	1.0%
15	«Արդշինբանկ» ՓԲԸ	62,676,688	62,213,114	463,574	1%	32.8%	3.8%
16	«Արմսվիսբանկ» ՓԲԸ	(2,200,000)	6,727,975	(8,927,975)	-133%	-3.9%	-0.5%
17	«Արարատբանկ» ԲԲԸ	11,424,792	11,124,846	299,946	3%	19.1%	2.8%
18	«Ֆասթ բանկ» ՓԲԸ	4,376,055	7,254,568	(2,878,513)	-40%	8.2%	3.7%
	Ընդամենը	229,830,882	262,847,903	(33,017,021)	-13%	15.5%	2.5%

Աղյուսակ 2-ում ներկայացված ցուցանիշների համեմատական վերլուծության արդյունքում կարող ենք նշել, որ ՀՀ առևտրային բանկերը 2023 թվականի ընթացքում գործել են արդյունավետ և ստացել են մոտ 229,8 մլրդ դրամի շահույթ, որը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 13 տոկոսային կետով: Վնասով է աշխատել ՀՀ առևտրային երկու բանկ՝ «Արցախբանկ» ՓԲԸ-ն և «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ն:

²² Կազմել է հեղինակը՝ հիմք ընդունելով ՀՀ առևտրային բանկերի կողմից սահմանված կարգով հրապարակված ֆինանսական ցուցանիշները, ՀՀ առևտրային բանկերի կայքէջեր, <https://www.cba.am/am/SitePages/fscfobanks.aspx>

²³ Ցույց է տալիս նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ փոփոխությունը՝ տոկոսային արտահայտությամբ:

ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական կայունությունը բնութագրող հիմնական ցուցանիշները (31.12.2023 թ. դրությամբ)²⁴

N	Սահմանաչափ	Կանոնադրական կապիտալ, հազ. ՀՀ դրամ	Նորմատիվային կապիտալ, հազ. ՀՀ դրամ	Ն1/1	Ն1/2	Ն2/1	Ն2/2	Ն3/1	Ն3/2	Ն4/1	Ն4/2
	Բանկի անվանումը	1 մլրդ դրամ	30 մլրդ դրամ	6.2%	8.3%	15%	60%	20%	500%	5%	20%
1	«Ինտերբանկ» ՓԲԸ	27,299,681	91,575,649	16.9%	18.2%	30.0%	74.3%	12.8%	59.5%	0.1%	2.6%
2	«ԲԻԲԼՈՍ Բանկ» ՓԲԸ	26,506,249	35,725,130	33.9%	38.3%	39.8%	254.4%	15.5%	42.1%	1.6%	3.9%
3	«Այդիբանկ» ՓԲԸ	38,985,949	49,695,721	17.8%	18.9%	35.8%	73.3%	15.7%	88.9%	0.4%	5.3%
4	«Ամերիաբանկ» ՓԲԸ	54,741,241	224,093,877	14.1%	16.8%	24.6%	74.9%	16.6%	101.1%	2.7%	10.8%
5	«Ակրա-Բանկ» ԲԲԸ	56,750,000	123,625,300	16.4%	18.7%	25.6%	105.0%	9.1%	40.0%	1.8%	6.5%
6	«Արցախբանկ» ՓԲԸ	23,261,150	62,364,528	88.3%	94.6%	62.4%	252.7%	6.8%	13.1%	0.1%	0.4%
7	«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ	63,906,231	49,973,003	20.2%	21.2%	26.7%	91.8%	9.8%	38.1%	2.7%	7.0%
8	«Յոնիբանկ» ԲԲԸ	33,704,675	38,075,417	15.0%	16.8%	31.2%	71.1%	11.0%	94.4%	2.4%	11.2%
9	«Էվոկաբանկ» ՓԲԸ	23,000,000	70,878,103	17.1%	18.9%	39.8%	128.8%	11.6%	56.0%	4.0%	8.5%
10	«ԱՄԻՕ Բանկ» ՓԲԸ	170,092,515	103,095,348	16.2%	17.0%	22.9%	90.6%	20.0%	169.6%	0.3%	2.3%
11	«Մելլաթբանկ» ՓԲԸ	32,100,000	51,852,212	57.4%	58.1%	59.5%	119.8%	18.0%	40.7%	1.0%	3.3%
12	«Կոնվերսբանկ» ՓԲԸ	20,010,866	73,312,602	17.5%	18.2%	44.4%	114.6%	6.3%	9.9%	3.4%	10.4%
13	«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ	18,434,350	60,426,971	20.7%	21.6%	31.4%	69.4%	16.0%	224.7%	1.7%	6.4%
14	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ	30,397,316	63,639,930	12.9%	16.2%	23.7%	100.5%	17.3%	127.3%	3.7%	15.3%
15	«Արդշինբանկ» ՓԲԸ	52,227,251	174,028,159	17.2%	18.2%	41.6%	78.6%	15.5%	154.8%	4.3%	8.7%
16	«Արմսվիսբանկ» ՓԲԸ	16,205,748	91,361,993	14.4%	21.5%	45.8%	268.5%	10.9%	48.1%	4.0%	14.6%
17	«Արարատբանկ» ԲԲԸ	19,630,412	58,604,475	16.7%	17.5%	35.4%	80.0%	9.6%	76.7%	2.2%	12.8%
18	«Ֆասթ բանկ» ՓԲԸ	30,100,000	44,731,931	38.0%	38.9%	20.0%	210.4%	4.3%	0.0%	1.8%	3.8%
	Ընդամենը	737,353,634	1,467,060,349	25.0%	27.2%	35.6%	630.7%	12.6%	76.9%	2.1%	7.4%

²⁴ Կազմել է հեղինակը՝ հիմք ընդունելով ՀՀ առևտրային բանկերի կողմից սահմանված կարգով հրապարակված ֆինանսական ցուցանիշները, ՀՀ առևտրային բանկերի կայքէջեր, <https://www.cba.am/am/SitePages/fscfobanks.aspx>

ՀՀ առևտրային բանկերի կապիտալի համարժեքության տնտեսական նորմատիվների փաստացի ցուցանիշների համեմատական վերլուծության արդյունքում հատկանշական են «Արցախբանկ» ՓԲԸ և «Մելլաթբանկ» ՓԲԸ Ն1/1 նորմատիվի համապատասխանաբար՝ 88,3% և 57,4% ցուցանիշները, իսկ Ն1/2 նորմատիվի համապատասխանաբար՝ 94,6% և 58,1% ցուցանիշները, որոնք փաստում են վերջիններիս պասիվ ռիսկային քաղաքականության մասին: «Արցախբանկ» ՓԲԸ նմանատիպ ցուցանիշի ձևավորման հիմնապատճառը պայմանավորվում է ներդրումային միջավայրի փոփոխությամբ:

ՀՀ առևտրային բանկերի իրացվելիության ռիսկերի կառավարման նպատակով սահմանված Ն2/2՝ «բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև սահմանային հարաբերակցությունը» (ընթացիկ իրացվելիություն) նորմատիվի փաստացի ցուցանիշի գծով հատկանշական է «Արմավիսբանկ» ՓԲԸ 268.5% ցուցանիշը, որն առաջին հայացքից կարելի է որակել որպես ռեսուրսների՝ ակտիվների և պասիվների ոչ արդյունավետ կառավարման արդյունք: Սակայն սույն խնդիրն առանձին ուսումնասիրության կարիք ունի և կարող է առանձին հետազոտության առարկա դառնալ:

ՀՀ բանկերի խոշոր փոխառուների գծով ռիսկերի և բանկի հետ կապված անձանց գծով ռիսկի կառավարման տնտեսական՝

- Ն3/1՝ «մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը» նորմատիվի սահմանագծին մոտ է գտնվում «Ամիօ բանկ» ՓԲԸ ցուցանիշը, որը 20%-ով դիտվում է ամենառիսկայինը:
- Ն4/1՝ «բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը» նորմատիվի սահմանագծին մոտ է գտնվում «Էվոկաբանկ» ՓԲԸ ցուցանիշը, որը 4%-ով դիտվում է ամենառիսկայինը:
- Ն4/2՝ «բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը» նորմատիվի սահմանագծին մոտ է գտնվում «Արմավիսբանկ» ՓԲԸ ցուցանիշը, որը 14.6%-ով դիտվում է ամենառիսկայինը:

Այժմ ներկայացնենք սույն հետազոտության շրջանակներում առաջադրված իրավիճակային խնդրի «Երկրում տնտեսական ակտիվության անկման» հնարավոր իրադարձության տեղի ունենալու պարագայում ՀՀ առևտրային բանկերի վարկային պորտֆելի 5%, 10%, 20% և 30% անհուսալի դասակարգման դեպքում կապիտալի համարժեքության և իրացվելիության ռիսկերը բնութագրող ցուցանիշների վարքագիծը:

Աղյուսակ 4-ում ներկայացվում է առաջադրված իրավիճակի ի հայտ գալու պարագայում ՀՀ առևտրային բանկերի նորմատիվային կապիտալի վիճակը:

Աղյուսակ 4

ՀՀ առևտրային բանկերի նորմատիվային կապիտալը (31.12.2023 թ. դրությամբ)

25

	Բանկի անվանումը	Վարկային պորտֆելի անհուսալի դասակարգումը			
		5%-ի դեպքում	10%-ի դեպքում	20%-ի դեպքում	30%-ի դեպքում
1	«Ինեկոբանկ» ՓԲԸ	74,730,753.3	57,885,857.5	24,196,066.0	(9,493,725.5)
2	«ԲԻԲԼՈՍ Բանկ» ՓԲԸ	33,196,500.8	30,667,871.5	25,610,613.0	20,553,354.5
3	«ԱյդիԲանկ» ՓԲԸ	41,483,152.5	33,270,583.9	16,845,446.8	420,309.7
4	«Ամերիաբանկ» ՓԲԸ	174,856,548.9	125,619,220.8	27,144,564.6	(71,330,091.6)
5	«Ակրա-Բանկ» ԲԲԸ	96,508,816.5	69,392,333.0	15,159,366.0	(39,073,601.0)
6	«Արցախբանկ» ՓԲԸ	60,989,748.4	59,614,968.7	56,865,409.4	54,115,850.1
7	«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ	42,156,357.5	34,339,711.9	18,706,420.8	3,073,129.7
8	«Յունիբանկ» ԲԲԸ	30,598,987.4	23,122,557.7	8,169,698.4	(6,783,160.9)
9	«Էվոկաբանկ» ՓԲԸ	60,290,534.8	49,702,966.5	28,527,830.0	7,352,693.5
10	«ԱՄԻՕ Բանկ» ՓԲԸ	78,204,049.3	53,312,750.5	3,530,153.0	(46,252,444.5)
11	«Մելլաբանկ» ՓԲԸ	49,969,089.2	48,085,966.4	44,319,720.8	40,553,475.2
12	«Կոնվերսբանկ» ՓԲԸ	59,721,050.8	46,129,499.6	18,946,397.2	(8,236,705.2)
13	«Էյ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ	51,191,242.1	41,955,513.1	23,484,055.2	5,012,597.3
14	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ	49,069,976.6	34,500,023.2	5,360,116.4	(23,779,790.4)
15	«Արոշինբանկ» ՓԲԸ	140,449,144.5	106,870,129.9	39,712,100.8	(27,445,928.3)
16	«Արմավիսբանկ» ՓԲԸ	83,032,821.2	74,703,649.4	58,045,305.8	41,386,962.2
17	«Արարատբանկ» ԲԲԸ	48,559,324.8	38,514,174.6	18,423,874.2	(1,666,426.2)
18	«Ֆասթ բանկ» ՓԲԸ	40,272,841.6	35,813,752.2	26,895,573.4	17,977,394.6

Աղյուսակ 4-ում ներկայացված արդյունքները փաստում են, որ

- ՀՀ առևտրային բանկերի վարկային պորտֆելի 5% անհուսալի դասակարգման դեպքում նորմատիվային կապիտալի նվազագույն սահմանաչափի խախտում չի արձանագրվի:
- Վարկային պորտֆելի 10% անհուսալի դասակարգման դեպքում մեկ բանկում արձանագրվել է նորմատիվային կապիտալի սահմանաչափից ցածր ցուցանիշ:
- Վարկային պորտֆելի 20% և 30% անհուսալի դասակարգման դեպքում նորմատիվային կապիտալի նվազագույն սահմանաչափը կխախտեն մոտ 15 բանկ:

Աղյուսակ 5-ում ներկայացվում է առաջադրված իրավիճակի ի հայտ գալու պարագայում ՀՀ առևտրային բանկերի կապիտալի համարժեքության Ն1/1 և Ն1/2 տնտեսական նորմատիվների վիճակը:

²⁵ Կազմել է հեղինակը՝ հիմք ընդունելով ՀՀ առևտրային բանկերի կողմից սահմանված կարգով հրապարակված ֆինանսական ցուցանիշները, ՀՀ առևտրային բանկերի կայքէջեր, <https://www.cba.am/am/SitePages/fscfobanks.aspx> և Սթրես թեստերի մեթոդաբանությունը:

Աղյուսակ 5

**ՀՀ առևտրային բանկերի կապիտալի համարժեքության ցուցանիշները
(31.12.2023 թ. դրությամբ)²⁶**

Բանկի անվանումը	Ն1/1՝ հիմնական կապիտալ / ոչսկոյվ կշռված ակտիվներ				Ն1/2՝ նորմարիվ կապիտալ / ոչսկոյվ կշռված ակտիվներ			
	5%-ի	10%-ի	20%-ի	30%-ի	5%-ի	10%-ի	20%-ի	30%-ի
«Ինելկորանկ» ՓԲԸ	15%	12%	5%	-3%	15%	12%	6%	-2%
«ԲԻԲԼՈՍ Բանկ» ՓԲԸ	33%	31%	27%	22%	37%	35%	31%	26%
«Այրիբանկ» ՓԲԸ	23%	20%	15%	8%	16%	13%	7%	0%
«Ամերիաբանկ» ՓԲԸ	11%	8%	0%	-9%	14%	10%	2%	-7%
«Ակրա Բանկ» ԲԲԸ	16%	12%	4%	-7%	15%	11%	3%	-8%
«Արցախբանկ» ՓԲԸ	47%	46%	43%	41%	94%	94%	94%	94%
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ	19%	16%	9%	2%	19%	16%	9%	2%
«Յունիբանկ» ԲԲԸ	15%	12%	6%	-2%	14%	11%	4%	-4%
«Էվոլյուսիոն» ՓԲԸ	15%	13%	7%	1%	17%	14%	9%	2%
«ԱՄԻՕ Բանկ» ՓԲԸ	22%	18%	10%	0%	13%	10%	1%	-10%
«Մեյլաբանկ» ՓԲԸ	57%	57%	55%	52%	57%	56%	54%	52%
«Կոնվերսբանկ» ՓԲԸ	15%	12%	5%	-3%	15%	12%	5%	-3%
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ	19%	16%	10%	2%	19%	16%	10%	2%
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ	10%	7%	-1%	-11%	13%	9%	2%	-8%
«Արդշինբանկ» ՓԲԸ	17%	13%	6%	-2%	15%	12%	5%	-4%
«Արմավիսբանկ» ՓԲԸ	14%	12%	8%	4%	20%	18%	15%	11%
«Արարատբանկ» ԲԲԸ	15%	13%	7%	0%	15%	12%	6%	-1%
«Ֆաթա բանկ» ՓԲԸ	45%	42%	37%	31%	36%	34%	28%	20%

Աղյուսակ 5-ում ներկայացված արդյունքները փաստում են, որ ՀՀ առևտրային բանկերի վարկային պորտֆելի 5% և 10% անհուսալի դասակարգման դեպքում կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափի խախտում չի արձանագրվի:

Աղյուսակ 6-ում ներկայացվում է առաջադրված իրավիճակի ի հայտ գալու պարագայում ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր իրացվելիության Ն2/1 տնտեսական նորմատիվի վիճակը: Ներկայացված արդյունքները փաստում են, որ ՀՀ առևտրային բանկերի վարկային պորտֆելի 5%, 10%, 20% և 30% անհուսալի դասակարգման դեպքում ՀՀ կենտրոնական բանկի իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով սահմանված տնտեսական նորմատիվների խախտման դեպք չի արձանագրվի, տեղի կունենան ցուցանիշների բարելավում:

²⁶ Կազմել է հեղինակը՝ հիմք ընդունելով ՀՀ առևտրային բանկերի կողմից սահմանված կարգով հրապարակված ֆինանսական ցուցանիշները, ՀՀ առևտրային բանկերի կայքէջեր, <https://www.cba.am/am/SitePages/fscfobanks.aspx>, Սթրես թեստերի մեթոդաբանությունը:

Աղյուսակ 6

ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր իրացվելիության նորմատիվները²⁷

	Բանկի անվանումը	Ն2/1 նորմատիվի հաշվարկ			
		5%-ի	10%-ի	20%-ի	30%-ի
1	«Ինեկոբանկ» ՓԲԸ	31%	32%	34%	36%
2	«ԲԻԲԼՈՍ Բանկ» ՓԲԸ	41%	42%	44%	46%
3	«ԱյդիԲանկ» ՓԲԸ	37%	37%	39%	41%
4	«Ամերիաբանկ» ՓԲԸ	25%	26%	29%	31%
5	«Ակբա-Բանկ» ԲԲԸ	27%	28%	30%	32%
6	«Արցախբանկ» ՓԲԸ	63%	63%	65%	66%
7	«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ	28%	29%	31%	33%
8	«Յունիբանկ» ԲԲԸ	32%	33%	35%	37%
9	«Էվոկաբանկ» ՓԲԸ	41%	42%	44%	46%
10	«ԱՄԻՕ Բանկ» ՓԲԸ	24%	24%	26%	28%
11	«Մելլաթբանկ» ՓԲԸ	61%	62%	64%	66%
12	«Կոնվերսբանկ» ՓԲԸ	46%	47%	50%	53%
13	«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ	32%	34%	36%	39%
14	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ	24%	25%	27%	29%
15	«Արդշինբանկ» ՓԲԸ	42%	43%	45%	47%
16	«Արմսվիսբանկ» ՓԲԸ	47%	48%	50%	52%
17	«Արարատբանկ» ԲԲԸ	36%	37%	39%	41%
18	«Ֆասթ բանկ» ՓԲԸ	21%	22%	24%	26%

Եզրակացություններ: Կարևորվում է բանկային համակարգի՝ որպես տնտեսության ֆինանսական հոսքերը կառավարող հիմնական ֆունկցիոնալ կառուցի գործունեության հուսալիությունը և կայունությունը, ուստի, սույն հետազոտության շրջանակներում առաջադրվել են համաշխարհային արդի մարտահրավերներից բխող իրավիճակային խնդիրներ, և դրանց ի հայտ գալու պարագայում ուսումնասիրվել է ՀՀ առևտրային բանկերի կայունության հիմնական ցուցիչները բնութագրող՝ կապիտալի համարժեքության և իրացվելիության տնտեսական նորմատիվների, ինչպես նաև նորմատիվային կապիտալի ռիսկերը բնութագրող ցուցանիշների վարքագիծը:

ՀՀ առևտրային բանկերի գործունեության 2023 թվականի տարեկան արդյունքների ուսումնասիրության ընթացքում ուշագրավ է «Արդշինբանկ» ՓԲԸ՝ 2023 թվականի ընթացքում վաստակած 62,7 մլրդ դրամ շահույթը, որը կազմում է 18 առևտրային բանկերի ընդհանուր շահույթի 27,3%-ը:

Շահույթի ցուցանիշի կտրուկ նվազում է արձանագրվել «Արցախբանկ» ՓԲԸ-ում՝ 426% կամ 31,5 մլրդ դրամ և «Էվոկաբանկ» ՓԲԸ-ում՝ 57% կամ 14,7 մլրդ դրամ: «Արցախբանկ» ՓԲԸ շահույթի նվազման հիմնապատճառն ակնհայտ է և մեկնաբանման կարիք չունի, իսկ «Էվոկաբանկ» ՓԲԸ 14,7 մլրդ դրամ շահույթը կարող է առանձին ուսումնասիրության առարկա դառնալ՝ որպես համակարգային խնդիրը բնութագրող երևույթ:

Միաժամանակ, հարկ է նշել, որ «Էվոկաբանկ» ՓԲԸ-ն 2023 թվականի արդյունքում ստացած շահույթով ՀՀ առևտրային բանկերի շարքում զբաղեցնում է 9-րդ հորիզոնականը:

²⁷ Կազմել է հեղինակը՝ հիմք ընդունելով ՀՀ առևտրային բանկերի կողմից սահմանված կարգով հրապարակված ֆինանսական ցուցանիշները, ՀՀ առևտրային բանկերի կայքէջեր, <https://www.cba.am/am/SitePages/fscfobanks.aspx>, Սթրես թեստերի մեթոդաբանությունը:

Դիտարկվող ժամանակաշրջանում ROE և ROA ցուցանիշների գծով լավագույն եռյակի կազմում իրենց մշտական տեղն ունեն՝

- «Ինեկոբանկ» ՓԲԸ-ն. համապատասխանաբար՝ 28.4% և 4,5%,
- «Արդշինբանկ» ՓԲԸ-ն. համապատասխանաբար՝ 32,8% և 3,8%:

Սթրես թեստերի մեթոդաբանությամբ առաջադրված «Երկրում տնտեսական ակտիվության անկման հետևանքով ՀՀ առևտրային բանկերի վարկային պորտֆելի 5%, 10%, 20% և 30% անհուսալի դասակարգելու դեպքում» իրավիճակային խնդրի տեղի ունենալու պարագայում ՀՀ առևտրային բանկերի կապիտալի համարժեքության և իրացվելիության ռիսկերը բնութագրող հիմնական ցուցանիշների վարքագծում կարձանագրվեն հետևյալ խնդիրները.

- *Կապիտալի համարժեքության գծով* խնդիրներ չեն արձանագրվել չորս բանկում, որը բացատրվում է վերջիններիս պասիվ վարկային քաղաքականությամբ, իսկ տասնհինգ բանկում նորմատիվային կապիտալը կկազմի նվազագույն սահմանաչափից ցածր, ընդ որում, վարկային պորտֆելի 30% դուրս գրելու պարագայում նորմատիվային կապիտալի բացասական արդյունքներ կարձանագրվեն 10 բանկում:
- *Ընդհանուր իրացվելիության նորմատիվն* ավելի է բարելավվել, որը բացատրվում է անհուսալի վարկերի դասակարգման հետևանքով ընդհանուր ակտիվների (հայտարարի) նվազմամբ, այն պարագայում, երբ բարձր իրացվելի ակտիվները (համարիչը) մնացել են անփոփոխ:

Միջազգային հանրության կամ առանձին պետությունների կողմից Հայաստանի նկատմամբ տնտեսական սահմանափակումներ կիրառելու դեպքում ՀՀ առևտրային բանկերի առջև կարող են ծառանալ հետևյալ խնդիրները.

1. վճարահաշվարկային համակարգի խաթարում,
2. փոխարժեքների կտրուկ տատանումների հետևանքով կոլապսային վիճակի ձևավորում,
3. տնտեսական ակտիվության նվազում,
4. պետության անվճարունակության փաստի ի հայտ գալու հավանականություն:

Հետազոտության արդյունքները դիտարկելիս կարող ենք փաստել, որ երկրի տնտեսության իրական հատվածի թերզարգացման և ՀՀ առևտրային բանկերի գերզարգացման փաստը մտահոգության տեղիք է տալիս:

Կատարված եզրակացությունների արդյունքում ՀՀ առևտրային բանկերին առաջարկվում է՝

1. Սթրես թեստավորման մեթոդաբանությամբ ստացված և 4-րդ, 5-րդ, 6-րդ աղյուսակներում ներկայացված արդյունքների հիման վրա վերանայել կապիտալի համարժեքության և իրացվելիության ռիսկերի կառավարման մոտեցումները, մասնավորապես՝ կառուցել շահութաբերության և հավասարակշռության սկզբունքների հիման վրա:
2. Վարկային ռիսկերի կառավարման գործընթացում.
 - Ռիսկերի ընդունելի մակարդակը (ախորժակը) որոշելիս կիրառել ռիսկերի գնահատման սթրես թեստերի մեթոդաբանությունը, մասնավորապես՝ իրավիճակային խնդիրներ առաջադրել բանկի վարկառուների գործունեությանը բնորոշ ռիսկերի դիտակետից:

- Առանձնահատուկ ուշադրություն հատկացնել ՀՀ արտաքին տնտեսական քաղաքականությանը, ձեռնպահ մնալ դիսկային շուկաներում գործող ՀՀ տնտեսավարողների վարկավորման գործընթացներից:
3. Ձեռնպահ մնալ գերշահույթ ապահովող դիսկային գործառնություններից, մասնավորապես՝ միջազգային հանրության կողմից կիրառվող պատժամիջոցների տիրույթում գործող տնտեսավարողների հետ գործառնությունների իրականացումից:

Օգտագործված գրականություն

1. Աղաբեկյան Է., Կենտրոնացումները՝ որպես կապիտալի շուկայի զարգացման խոչընդոտ, Եր., «Բանբեր ՀՊՏՀ», թիվ 4, 2020, էջ 62-83, <https://asue.am/upload/files/science/banber/2020-year-4/4.pdf>
2. Բաբայան Վ., ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշների համեմատական վերլուծություն, Եր., «Տնտեսություն և հասարակություն», թիվ 3, 2023 թ., էջ 31-49, <chrome-extension://efaidnbnmnnoibpcajpcgicfindmkaj/https://asue.am/upload/files/science/economy/2023-year-3/2.pdf>
3. «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-68, 30.06.1996 թ.:
4. «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ ցուցակված ընկերություններ, https://amx.am/am/issuers_list
5. ՀՀ առևտրային բանկերի կայքէջեր, <https://www.cba.am/am/SitePages/fscfobanks.aspx>
6. ՀՀ ԿԲ խորհրդի 09.02.2007 թ. թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» Կանոնակարգ 2, <https://www.cba.am/am/SitePages/regbanks.aspx>
7. ՀՀ ԿԲ խորհրդի 10.09.2007 թ. 205-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերի լրացման ցուցումները» պահանջների հիման վրա հրապարակված տեղեկությունը, <https://www.cba.am/am/SitePages/regbanks.aspx>
8. ՀՀ ԿԲ խորհրդի 16.04.2013 թ. թիվ 102-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4, <https://www.cba.am/am/SitePages/regbanks.aspx>
9. «ՀՀ կենտրոնական բանկ մասին» ՀՀ օրենք, ՀՕ-96, 30.06.1996 թ.:
10. ՀՀ ԿԲ Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2022 թ., https://www.cba.am/AM/ppperiodicals/Stability_Report_2022.pdf
11. ՀՀ ՎԿ կայքէջ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2023 թ. հունվար-դեկտեմբերին, Եր., 2024, էջ 154-157, https://armstat.am/file/article/sv_12_23a_411.pdf
12. Հովակիմյան Թ., Ֆինանսական մաթեմատիկա, ուսումնական ձեռնարկ, Եր., «Տիգրան Մեծ», 2003, 216 էջ:
13. Սարգսյան Ա., Առաքելյան Կ., «Տնտեսագիտության վերլուծության տեսություն», ուսումն. ձեռնարկ, Եր., «Տնտեսագետ», 2010, 240 էջ:

14. Financial audit Manuel – 2020, <https://www.gao.gov/assets/gao-18-601g.pdf>
15. ISO 31000. Ռիսկերի կառավարման ստանդարտ, https://www.google.am/search?q=iso+31000&sca_esv=a591636a69e92710&sxsrf=ACQVn09ahr3tFUgHulyxJlrqQ_kfheuEnw:1708570286559&tbm=isch&source=iu&ictx=1&vet=1&fir=1WEoc5xYcQcRTM%252CdNLNp4vZ3f3uUM%252C_%253B7LzpiZPzoSw26M%252CtnvKluLhIAO_DM%252C_%253ByKhrnDsB2RpALM%252Cz5JoTqi9Ss5ErM%252C_%253B5OV8rN0RoA5IVM%252C3TEICqKEcxwoom%252C_%253BIF6ibvAgOBr_CM%252CFP4IQrNjVpf4SM%252C_%253B9wsheC_Hs9YcDGM%252CLVMPtVkJaZETYM%252C%253BqrgsvU5AbgGnRM%252C1ebDsoyZb37mM%252C_&usg=AI4-kQ80a6w9Xcd3ydsNOlywXjbVMH-zA&sa=X&ved=2ahUKEwjc7IOo-L2EAX-QvEDHTMXBkMQ_h16BAhUEAE#imgrc=7LzpiZPzoSw26M
16. Управление рисками организаций, Интегрированная модель, Краткое изложение, Концептуальные основы, Сентябрь 2019, chrome-extension://efaidnbmnnnibpcajpcgclefindmkaj/http://ilinsk.com/wp-content/uploads/2019/11/COSO-ERM-Presentation_2019.pdf

ՎԱԳԱՆ ԲԱԲԱԿՅԱՆ

Доцент кафедры управленческого учета и аудита АГЭУ,
кандидат экономических наук

Оценка рисков достаточности и реализации капитала коммерческих банков РА. – Данная статья посвящена оценке текущего состояния надежности и стабильности коммерческих банков РА.

В исследовании предложены ситуационные проблемы, вытекающие из современных глобальных вызовов, в частности, в случае спада экономической активности страны, в случае ненадежной классификации кредитного портфеля коммерческих банков РА на уровне 5%, 10%, 20% и 30% оценить достаточности капитала банков и поведения основных показателей, характеризующих риски ликвидности и регуляторного капитала на основе финансовых показателей промежуточной отчетности за четвертый квартал 2023 года.

Основания неплатежеспособности, определенные банковским законодательством Республики Армения, теоретически не допускают образования отрицательного капитала в банках, но на практике это возможно, если последние скрывают в финансовой отчетности реальное качество активов.

Ключевые слова: банк, риск, доходность, достаточность капитала, ликвидность, стресс-тестирование

JEL: G21, G32

DOI: 10.52174/29538114_2024.1-32

VAHAN BABAYAN

*Associate Professor of the Chair of Management Accounting
and Audit of ASUE, Ph.D. in Economics*

Assessment of the Risks of Capital Adequacy and Realization of RA Commercial Banks. – This article is devoted to the assessment the current state of reliability and stability of RA commercial banks.

The research presented situational problems arising from current global challenges, in particular, based on the financial indicators of the fourth quarter of 2023 interim reports, to assess the behavior of banks' capital adequacy and liquidity, as well as the main indicators characterizing the risks of normative capital, in case of a decline in the economic activity of the country, in case of unreliable classification of 5%, 10%, 20% and 30% of the credit portfolio of RA commercial banks, based on the financial indicators of the interim reports of the fourth quarter of 2023.

The grounds of insolvency established by the banking legislation of the Republic of Armenia do not theoretically allow the formation of negative capital in banks, but in practice it is possible if the latter hide the real quality of assets in the financial statements.

Keywords: *bank, risk, profitability, capital adequacy, liquidity, stress testing*

JEL: G21, G32

DOI: 10.52174/29538114_2024.1-32